ՆՈՐ-ԴԱՐ

№ 198 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Չորեքշաբթի, 10 Նոյեմբերի 1893 Չորեքշաբթի, 10 Նոյեմբերի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 198

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 րուբլի, հատով 5 կոպէկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կոպ., րեկլամների համար կրկնապատիկը։

ԱԲԵԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԱՄԻՐԱՂԵԱՆՑ, ԵԿԱՏԱՐԻՆԷ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԳՕՉԵԱՆՑ և ՄԱՐԻԱՄ ՄԵԼՔՈՅԵԱՆ ՄԱԿԱՐԵԱՆՑ, ցաւօք սրտի յայտնում են ի գիտութիւն ազգականներին, ծանօթներին և բարեկամներին, առաջինի՝ ամուսնի, երկրորդի՝ դուստր, և երրորդի քոյր՝

ԴԱՐԻԿՈ ՄԵԼՔՈՅԵԱՆ ԱՄԻՐԱՂԵԱՆՑԻ

մահը և խնդրում են շնորհ բերել նոյեմբերի 11-ին, հինգշաբթի, առաւօտեան 10 ժամին Սոլոլակ, Սագովայա փողոց, տուն Իսմիրեանի № 58. ներկայ լինելու հանգուցեալի յուղարկաւորութեանը, որ տեղի կունենայ դէպի Զգրաշէն եկեղեցին։ Ամբիծքը կըկատարուի չորեքշաբթի երեկոյեան 5 ժամին։

(255) 1—1.

Բաժանորդագրութիւն. 8.

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔԻՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, նոյեմբերի 11-ին, Հայ դերասանական մշտական խումբը կըներկայացնէ առաջին անգամ

„ԱՐՏՈՅՏ„

Կոմ. 5 դործ., հեղ. Վ. ԻԼԻՐԵՆԲՐՈՒՍԿԻ
(Ցայտնի դերասան Պոսսարտի նորագոյն ռեպերտուարից)

Սկիզբն է ժամը ճիշտ 7½-ին երեկոյեան, վերջը փիշերոյան ժամը 11-ին։

Տոմսակները վաճառւում են թատրոնի կասսայում։

Ազդ.—Մօտ օրերս խումբը ներկայացնելու է «ՀԱՅՐԵՆԻՔ» դրաման։ Առաջիկայում լինելու է օր. Վարդուհու բենեֆիսը։

(509) 2—1

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Մեր դիտողութիւնները. Բ.։
«Հեռագիր «Նոր-Դար»-ին»
Քրոնիկոն։ — Քաղաքագլխի հեռագիրը։ Քաղաքային վարչութեան անդամների ընտրութեան օրը։ Հակողութիւն անբարոյական կանանց վրայ։ Նորնախիջեւանից։ Դանձակից։ Այս տարուայ բերքը Թիֆլիսի գաւառում։ Խլի-Ղարաբլիսայից։ Գեռաչէնից։ Ասխաբադից։ Ներսիսեան դպրեվոցի ձեռագիրների ցուցակը։
Իռւսիայի թերթերից։
Հայոց թատրոն։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Թուրքական լուրեր։
Հեռագիրներ։
Բանասիրական. — Մոռացուածի յիշատակարանից։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

ՀԵՌԱԳԻՐ «ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ

ԲԱԹՈՒՄ, 9 նոյեմ. 11 ժ. 40 վ.

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

Տեղւոյս նաւթային գործարանները դժոխք են ներկայացնում*). յուսահատութիւնն ընդհանուր է, վնասն ահագին։

*) Երեի հրդեհ է։ Խմբ.

Թիֆլիս, 9 նոյեմբերի 1893 թ.

ՄԵՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բ.

Թրքական արտաքին գործերի մինիստրութեան կողմից «Նոր-Դար»-ի մէջ հրատարակած հերքումից իմանում ենք, որ թրքական կառավարութիւնն եւրոպական մամուլի մէջ իրեն դէմ ուղղած մեղադրանքները ջրպարտութիւններ համարելով յայտնում է, որ հայերը Թիւրքիայում Սուլթանի հովանաւորութեան տակ ջերմագոյն են և թէ հայերը ընդհակառակն են վայելում Թիւրքիայում իրենց տէրութիւններին, ղեղուն և իրենի վերաբերութեամբ։

Մի ազգի համար իւր ազգային սովորութիւնները, իւր լեզուն և իւր ազգային կրօնը շատ թանկ են և նրա գոյութեան էական պայմաններն են։

Եթէ թրքական արտաքին գործերի մինիստրութիւնը պաշտօնապէս դրանց պահպանութեան կողմն է իրեն հրատարակում — դա նշանակում է, որ երկրի տէրը՝ Սուլթանը հաւատացած է, որ այդ պէս է և դրանց պահպանութեան իրաւունքը ճանաչում է։

Մի հպատակ ժողովրդի գոյութեան և զարգացման համար այդ անհրաժեշտ և գլխաւոր պայմանները ընդունելով, անկարելի է, որ նրա քաղաքական և տնտեսական զարգացման դէմ լինի տիրող, իշխող տարրը։

Քաղաքական ապահովութիւն ասելով, մենք ընդունում ենք այժմ դատարանների արդար կազմակերպութիւնը և տնտեսական ապահովութիւն ասելով, ընդունում ենք պարտաճանաչ և բարեխիղճ վարչութիւն (ադմինիստրասիոն)։

Չկան օրինաւոր դատարաններ, չկան կարգին վարչութիւններ — չի կարող և արդարութիւն լինել, չի կարող գոյքի և այլ բարիքների ապահովութիւն լինել։

Մի կառավարութիւն, որ հպատակ ժողովրդի ազգային սովորութիւնները, հետևաբար նրա առանձին կեանքը, նրա լեզուն, նրա կրօնը ճանաչում է և իւր պարտաւորութիւնն է համարում հովանաւորել դրանց, նրա համար գիւրին է, եթէ բարի ցանկութիւն ունի, իւր հպատակ ժողովրդի քաղաքական և տնտեսական կացութիւնն ապահովել, ժողովրդի պահանջների համեմատ դատարական և վարչական հաստատութիւններ կանգնեցնել։

Անտարակոյս վայրենի ժողովուրդներ, ինչպիսին զինուած քուրդերն են և պարտազանց ու ապաշնորհ պաշտօնեաները կարող են շատ բան խանգարել, ինչպէս և լինում է. բայց այդ ամենի առաջը կարելի է առնել, եթէ հաստատուն կամք լինի և իսկական շահերի գիտակցութիւն։

Մենք շատ լաւ գիտենք, որ, օրինակ, եթէ Երուսաղէմը յոյների կամ լատինների ձեռքումը լիներ, վաղուց հայերի անունն անգամ չէր լիշուիլ Երուսաղէմում,—հենց այդ պատճառով աւելի ցաւում ենք, որ անարժան պաշտօնեաների զէմ իրենց ազգային կրօնը շատ թանկ համարող քրդերի շնորհիւ Թրքա-Հայաստանի աշխատող և խաղաղ ժողովուրդը նեղութիւններ, հալածանքներ է կրում և իւր հայրենի երկրից գաղթելու է ստիպւում։

Թրքահայերի թշնամին միայն չի ցանկալ, որ օսմանեան կայսրութիւնը զարգանայ, զօրեղանայ—այդ մեր խորը համոզմունքն է, ինչպէս և այն, որ թրքահայերին հալածել՝—նշանակում է օսմանեան կայսերութիւնը վտանգել։

Եթէ թրքահայերի գոյութիւնը կապուած է սերտ կապով օսմանեան կայսրութեան հետ և այդ conditio sine quo non է, միևնոյն ժամանակ թրքահայերի զարգացումից և ամեն կողմից ապահով ու բարւօք կացութիւնից է կախուած օսմանեան կայսրութեան կանոնաւոր զարգացումը, մեծութիւնը և ապահովութիւնը։

Այդպէս ենք մենք հաւատացած։ Երկու կողմի համար բարին կամենալով, մենք կարծում ենք, որ հերքումներ հրատարակելուց աւելի նպատակայարմար է, որ Փոքր-Ասիայի քրիստոնեայ ժողովուրդները ապահով վիճակ ունենան և զարգանան իրենց պահանջների, իրենց սովորութիւնների և առանձնայատկութիւնների համեմատ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՒՏՔՈՒՐԻՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ *)

ԵՓԻՄԷ

Բ.

Հարսանեաց հանդէսը, որ իւր ազգային ու բացառիկութիւններով մի տեսակ ձանձրալի էր թւում, անցաւ մի վարկեանի նման, կամ, աւելի ճիշտն ասած, աննկատելի։ Նոյնքան աննկատելի անցնում էին ինձ համար և օրերն ու շաբաթները. կարծես թէ ժամերը կիսով չափ կարճացած լինէին։ Մեր տան մէջ՝ ընտանիքով և խանութի մէջ՝ յաճախորդներով շրջապատուած, ես ինձ մի տեսակ միայնակ էի զգում. ամեն բան ժժգոյն, ամեն ինչ դատարկ ու անխորհուրդ։ Ես այնպէս էի կարծում, թէ այդ բանը միայն ես գիտեմ. բայց յետ սխալւում էի, դանուեցան աչքեր, որոնք ինձնից ոչ պակաս թափանցեցին իմ հոգեկան դրութեան մէջ։

—Ի՞նչ է պատահել քեզ. խօ հիւանդ չե՞ս,—մի օր հարցրեց մայրս։

—Ե՞ս... ոչ, հիւանդ չեմ,—պատասխանեցի ես, բայց զգացի, որ նրա սուր նայուածքը փորձում է մինչև սրտիս խորքը թափանցել՝ ճշմարիտ պատասխան որոնելու համար։

*) Տես «Նոր-Դար» № 197.

—Այդ ինձ աւելի է վախեցնում,—կրկնեց նա նոյն չէչտով.—եթէ հիւանդ չես, ասել է մի ուրիշ աւելի վտանգաւոր պատճառ կայ, որ աշխատում ես ինձնից թաղցնել։

—Եւ ոչ մի պատճառ չկայ, որ վերտանգաւոր կամ անվտանգ լինի. չը գիտեմ ո՞րտեղից հանեցիր մի այդպիսի ենթադրութիւն։

—Ո՞րտեղից... մի րոպէ կանգնիր հայելու դիմաց, նայիր քո միշտ սեղմուած յօնքերին ու շրթունքներին... Բայց ո՛ր մէկն ասեմ. որքան կուզես ծածկիր, այնուամենայնիւ դէմքդ ու վարմունքներդ մատնում են քեզ...

Մայրս իրաւացի էր. ես էլ նկատում էի, որ ինչ-որ փոփոխութիւն է ծագել իմ մէջ, որ սրտիս մէջ ինչ-որ մի անծանօթ դատարկութիւն է յայտնուել, որ այդ դատարկ սիրտս ձգտում է ուր-որ և ես մի տեսակ պահանջ, քաղց եմ զգում այդ պարապը լցնելու, այդ դատարկութեան բաւականութիւն տալու. բայց ինչ...

Ես պատրաստ էի մօրս խոստովանելու, որպէս արել էի մինչև այդ օրը, պատրաստ էի նրան պատմելու ամեն ինչ, որքան էլ ծանր պաղտնիք լիներ։ Սակայն ինչ պատասխան տայի նրա վերջին հարցին, ինչպէս բացատրէի նրան այն բանը, որն ինձ դեռ անծանօթ էր, որի մասին ինքս դեռ ոչինչ չգիտէի և ինքս ինձ բացատրել անկարող էի։

Շատ ծիծաղելի և միևնոյն ժամանակ չափազանց անհեթեթ էի գտնում ասել մօրս թէ՝—Եփիմէի դէմքը գիշեր ու ցերեկ աչքիս առջևն է. թէ՝ միտքս ամբողջ ժամանակ նրանով է զբաղուած, թէ՝ երևակայութիւնս միշտ նրա չուրջն է թափառում. վերջապէս թէ՝ նրա ձեռքը, որ առաջին ծանօթացած գիշերը բռնեցի, միշտ իմ ձեռքիս մէջ եմ զգում և թէ չարունակ ցնցում է ինձ այն էլեքտրականութիւնը, որ անցաւ նոյն օրը մեր ձեռքերի հպումից...

Այո, պատմել մօրս այս բոլորի մասին՝ չատ ծիծաղելի բան էի համարում, ուստի զէթ ինքս մասամբ իսկ համոզուած չէի՝ թէ այդ բոլորն առաջ էր եկել Եփիմէի հետ հանդիպումից, ինձ այնպէս էր գալիս, որ մայրս լսելով մի այսպիսի յիմար պատճառաբանութիւն, պէտք է ծիծաղէր վրաս ասելով. «որդի, դու դեռ երեխայ ես, դեռ կաթ ծծելուդ ժամանակն է», ինչպէս ասել էր երբեմն։

Բայց այդ բոլորից յետոյ իրաւ է՝ որ ես միշտ առիթ էի որոնում նրան հպդիպելու, նրա վրայ նայելու և թէ հանդիպած ժամանակ կրծքիս մէջ մի տեսակ կծկում էի զգում. միայն դեռ չէր պատահել, որ ինքս ինձ հարց տուած լինէի՝ թէ ինչից է առաջ գալիս այդ ամենը։ Ընդհակառակը դրանք ինձ երևում էին շատ պարզ ու բնական բաներ, որոնց մասին՝ իմ կարծիքով՝ չարժէր իսկ միտք յոգնեցնել։

Մի շատ տարօրինակ ցանկութիւն էլ էր առաջ եկել իմ մէջ.—այդ Եփիմէի հետ մի քանի խօսք փոխանակելու անմեղ ցանկութիւնն էր։ Ամեն առաւօտ փողոց դնալու համար դեռ տանից չդուրս եկած՝ հաստատ կերպով վճռում էի, որ հանդիպած ժամանակ որևէ պատրուակով խօսեմ հետը։ Ի հարկէ, նախապէս գտնում էի այդ պատրուակը. մտքիս մէջ գոյութիւն ունեցող բոլոր բառերը տակնուվրայ էի անում, հիւսում էի նրանց, մտքիս մէջ կրկնութիւններ էի անում և այդ բոլորն անում էի այն նպատակով, որ եթէ մի երկու բառ կամ շատ-շատ մի երկու խօսք պէտք է խօսեմ հետը, որպէս զի այդ բառերը կամ այդ խօսքերը լինին շատ զեղեցիկ, շատ քաղցր, հմայիչ և վերջապէս բառեր, որոնք իրենց համաուստութեամբ հանգերձ կարողանան արտայայտել սրտիս բոլոր զգացումներն իրենց խորութեամբ ու լայնութեամբ... Բայց՝ հենց որ տեսնում էի նրան գէթ հեռուից, դէպի նա փոխած ամեն մի քայլիս հետ ցնդում էին այնքան խնամքով ընտրած ու սերտած բառերը, կարկամում էր լեզուս և այդպիսի վարկեաններում թըլուում էր ինձ՝ թէ զուրկ եմ խօսելու ընդունակութիւնից...

Ահա այս բանի համար ես շատ անգամ ժամերով մտածել եմ, ամեն անգամ էլ ինքս ինձ հարց տալով՝ «ինչու եմ ես այսպէս լինում...»—բայց չեմ կարողացել գտնել բուն պատճառը։

Մի առաւօտ արհեստանոց գնալու ժամանակ ճանապարհին ինձ ընկերացաւ Աւալեանը։ Ձիշտն ասած, այդ ընկերութիւնն ամենևին ցանկալի չէր։ Զգիտեմ ինչու՝ չէի կամենում, որ մի որևէ մէկը գիտենայ թէ ես ծանօթ եմ Եփիմէի հետ։ Եւ վճռեցի, որ եթէ հանդիպելու լինի, չտեսած ձևանամ և անցնեմ։ Բայց կըհաւատաք, որ այդ չնչին որոշումս իսկ չկարողացայ դլուխ տանել։ Երբ նա մօտեցաւ, աչքերս ինչ-որ մի անբնական զօրութեան ազդեցութեամբ դարձան նրա կողմը և ես ակամայ բարևեցի նրան։ Աւալեանը տեսաւ այդ և չարաճճիի նման բացականչեց.

—Օհօ. սուտ ձդնաւոր ես եղած... ինչ սիրուն պատառ է, բայց ո՛ր տեղից ծանօթացար այս «բանկի բիլետի» հետ։

—Մի հարսանիքում, պատասխանեցի ես։

—Բաղդաւոր մարդ ես..,աւելացրեց նա.—մեր քաղաքի նշանաւոր երիտասարդներից չատերն աչք ունին նրա վրայ։

— Այդ ես չդիտեմ... Սակայն ինձ ինչ...

—Լաւ, լաւ, մի ծածկիր. այստեղ սիրոյ խնդիր կայ. բաւական ժամանակ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ. — Հարցաթերթ

Մեր օրերս փիլիսոփայական Ընկ Խրիստոֆոր Կոմսի մոտ մի ֆիլիսոփա Հարցասեր Հյուր ունեցավ, որ Ընկ Կոմսի հետ շատ ժամանակ զրուցեց։ Ահա այդ զրուցակցության մի մասը։

—Ասա՛ մեզ, ինչպես է որ դու այդքան ուրախ ես, որ ամեն անգամ քեզ տեսնում ենք, միշտ ծիծաղում ես։ Ի՞նչ է քո ուրախության պատճառը։

—Ես ուրախ եմ, որ ապրում եմ։

—Ուրեմն ապրելը ուրախություն է քեզ համար։

—Իհարկե։

—Ինչո՞ւ։

—Որովհետև ես ապրում եմ։

—Ուրեմն ամեն ապրող ուրախ է։

—Ոչ, ամեն ապրող չէ, որ ուրախ է։

—Ինչո՞ւ։

—Որովհետև ամեն ապրող չի ապրում։

—Ուրեմն ամեն ապրող չի ապրում։

—Ոչ, ամեն ապրող չի ապրում

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ

(Վիպակ)

Ն. Իշխ.

—

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

VII.

ՀՈՎՀԱՆՆԵՍ

Ձ.

Լուսոյն Հեթումայ ‹Մատեան Պատմութեան Հայոց› կոչեցեալ գրոց ի 8-դ. գլխէ մինչեւ 13-դ. գլուխ, որ կը պատմէ Հեթումայ Ա. թագաւորութեան սկիզբը, Հեթում ամենայն հաւանականութեամբ ծնած պիտի ըլլայ 1230 թուականին, որ է Ղազանի մեծ յաղթութեան տարին, որ Հեթումայ հօրը՝ Լեւոն Բ. թագաւորին ձեռքով տարուեցաւ Եգիպտոսի սուլթանին դէմ։ Հեթում ունեցաւ երկու քոյր եւ երեք եղբայր, որոնցմէ ամենամեծը Թորոս էր, որ Լեւոնի մահուան ատեն տասնհինգ տարեկան էր։ Հեթում ունեցաւ նաեւ մօրաքոյր մը, որ Լեւոնի քոյրերէն մէկն էր, եւ որ Հեթումայ մանկութեան ատեն մեծ ազդեցութիւն ունեցաւ անոր վրայ։ Ասիկա Ռուբինեան տոհմի Ստեփանոս իշխանին կինն էր, որ Լեւոնի մահուան ատեն Սիսի մէջ կը գտնուէր, եւ որ Հեթումայ մանկութեան ատեն անոր հետ միասին կ՚ապրէր։ Ստեփանոսի կինը Լեւոնի քոյրերէն ամենամեծն էր, եւ

Այդ մասին նոյեմբերի 2-ից Հռոմից «Մահճանի գործակալութեան» հետեւեալն է հեռագրուած. «Գրաֆ Կայլնոկին վաղը Զուիցերիայից Միլան կը ժամանէ և վերին Իտալիայում կը մնայ մի քանի օր։ Որովհետև նա արդէն թոյլտուութիւն է ստացել թագաւորին և թագուհուն ներկայանալու, ուստի թագաւորը հրաւիրել է նրան Մոնցա, ուր գրաֆը գնալու է երկու օրից յետոյ։ Թագաւորը հրաւիրել է և Բրինին՝ այդ տեսակցութեանը ներկայ լինելու համար։ Այսօր երեկոյեան Բրինը Միլան ուղեւորուեց»։

—«Tageblatt»-ի ասելով, իտալական նախկին մինիստր նախագահ և Իտալիայի յայտնի քաղաքական գործիչ Կրիսպին ներկայումս գտնւում է Բերլինում։

—Աւստրիա-Ունգարիայի սլաւոնական ցեղերի ներկայացուցիչներից չատերը, բացի լեհերից, կազմել են ընդդիմադիր կուսակցութիւն հակառակ Վինդիշգրեցի խմբակցական մինիստրութեան։ Վերջի նրս արդէն գործունէութեան մեծ եւանդ է ցոյց տալիս և հաւանական է, որ ընդդիմադիր կուսակցութիւնն անզօր կը դտնուի վնասելու Վինդիշգրեցի մինիստրութեանը։

—Յունաստանի թագաւորը խօսել է իր գահական ճառն ազգային ժողովի բացման ժամանակ, որ տեղի է ունեցել հոկտեմբերի 27-ին։ Թագաւորը յայտնել է, որ կառավարութիւնը ոչ մի ջանք չի խնայում տնտեսական ճգնաժամի առաջն առնելու և երկրի սլնտեսական դրութիւնը բարւոքելու համար։

—Վերջին տեղեկութիւններից երեւում է, որ սպանացիներն արդէն ձրնշել են մաւրերի (քաբիլների) յուզումը Մելիլլում։ Քաբիլները խոյս են տալիս դէպի սարերը։ Նրանց հեծելազօրքի գլխաւոր չէյխն արդէն սպանուած է։

—«Հաւասի գործակալութեանը» Պարիզից հաղորդում են, որ Սերբիայի մինիստր Դէորգիևիչին վիրաւորող մարդու անունը Լօտեօ է։ Ասում են, որ վերջինս խելագար է։ Դէորգիևիչի դրութիւնը վատանում է։

—Սոֆիայից հաղորդում են անգլիական «Times» թերթին, որ ուսանող Դէորգիևը, որ մեղադրւում էր նախկին մինիստր Բելչևի սպանութեան գործում և որին դատարանն արդարացրեց և արձակեց բանտից,—այժմ կրկին բանտարկուած է։

—Ֆրանսիայում զբաղել է Կորնելիուս Հերցին անգլիական կառավարութիւնից պահանջելու հարցը։ Կորնելիուս Հերցի առողջութիւնը, բժիշկների վկայութեամբ, լաւ է։ Նա կարող է դատարան ներկայանալ։ Վերջերումս ֆրանսիական ներկայացուցիչը Լոնդոնում իւր կառավարութեան կողմից յայտնեց Անգլիայի արտաքին գործերի մինիստր լորդ Ռոզբերիին, որ անգլիական կառավարութիւնը Հերցին ֆրանսիական արդարադատութեան ձեռքը տայ։ Ֆրանսիայում այդ առթիւ յուզուած մարդիկ չեն խաղաղիլ, մինչև որ չարաբաստ Պանամայի խնդրի մէջ մեծ մասնակցութիւն ունեցող անձը, Կորնելիուս Հերցը, արժանաւոր պատիժ չստանայ։ Սակայն, վերջինս, որի վրայ չատ պատասխանատուութիւն է ընկնում այդ նշանաւոր խնդրում, հանգամանքների բերմամբ դեռ անպատիժ է մնում, մինչդեռ այնպիսի ականաւոր անձեր, ինչպիսիք են Ֆերդինանդ Լեսեպս, Էյֆել, Ֆոնտան և այլք, տուժել են և իրենց հասանելիք հատուցումն էլ տուել։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թագաւորն Գրուածքներն Ամերիկայում. —Ամերիկայում ամեն գործ իւր գործակալութիւնն ունի։ Կան և թատերական գրուածների գործակալութիւններ։ Այդ գործակալութիւնները ձեռք են բերում նոր գրուածներ, հեղինակներից գնում են նրանց պիեսների հրատարակութեան իրաւունքը և այլն։ Ահա այդպիսի մի գործակալութիւն, որ 22 տարի է ինչ գոյութիւն ունի, վերջերումս հաշուել է, որ այդքան ժամանակամիջոցում գործակալութեան ձեռքի տակովն անցել են 11,000 հատ պիեսներ, այսինքն իւրաքանչիւր տարի 500 պիես։ Սրանից երեւում է թէ որքան մեծ է Ամերիկայում թատերական երկերը գրողների թէ թիւը և թէ եռանդը։ Շատ մարդիկ, որոնք հեղինակ անուն վաստակելու տենդով են բռնուած, թատերական գրուածների պաշարն են լրացնում։ Շատ է և այդ ճիւղը սիրողների թիւը։ Ի տարկէ կան այդ ճիւղում և բեղմնաւոր և տաղանդաւոր հեղինակներ։ Թէ որքան մեծ է գրամատուրգների հեղեղն Ամերիկայում, այդ երեւում է հետեւեալ փաստից։ Մօտիկ անցեալումն էր որ Միացեալ Նահանգների ամենատարածուած թերթը՝ «New-lork Herald» մրցանակ խոստացաւ այն հեղինակին, ով իւր ցանկացած մի արարուածով պիեսը կը դրէ. և այդ բանում մրցողների, իրենց բաղդը փորձող հեղինակների թիւը 600-ի հասաւ։

—

Հին-յունական երաժշտութիւնը։ — Աթենքից հեռագրել են անգլիական «Standart» թերթին. «Այնտեղ, ուր Դելֆիան տաճարն էր—յունական պատմական յայտնի պատգամախօսութեան տեղը,—ֆրանսիացի հնագէտները,իրենց կատարած պեղումների ժամանակ, արել են մի կարեւոր երաժշտական-գրականական գիւտ.—գտել են Ապոլլոնի օրհներգը, որի որոշ գրուած է քարի վրայ։ Իւրաքանչիւր վանկի վրայ դրուած են երաժշտական խազեր (նոտայական նշանները) երգելու համար։ Այդ նշանաւոր արձանագրութիւնը վերաբերում է երկրորդ դարին՝ Քրիստոսից առաջ։ Ենթադրում են, որ այդ գիւտը բաւական լոյս կը սփռի հին-յունական երաժշտութեան վրայ և նրան ուսումնասիրելու բանալին կը դտանայ։ Նոտերն Արիստոտելի աշակերտ երաժշտագէտ Արիստոկսենի հնարածներն են»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐՏԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 նոյեմբերի.—Բարձրաբազոյն թոյլ է տրուած ուղի ամիս ժամանակով աւստրիական և ռումինական սահմանների մաքսատների վրայով վերադարձնել այն տոպրակները, որոնցով ռուսական հացահատիկ է արտահանուած։

«Нов. Вр.»-ի յանձնարարութեամբ մարդիկ էին գնացել դիտելու այն տեղերը, ուր ենթադրւում է, որ կործանուել է «Ռուսալիա» նաւը։ Կարծում են, որ այդ նաւը կործանուել է «Բալկան» կոչուած ծանծաղուտի չրջակայքում, «Սեվերչեր» փարոսից դէպի հիւսիս 7 վերստ հեռու։

Երկկ գրաֆ Դելեանովի ներկայութեամբ տեղի ունեցաւ երեխաների ֆիզիքական զարգացմանը նպաստող Պետերբուրգի ընկերութեան բացումը։ Անդամների թիւը 150-ից աւելի է։ Մըշտական յանձնաժողով է կազմուած տեխնիքական զարգացման համար։

ՎԼԱԴԻՎԱՍՏՈԿ, 9 նոյեմբերի.—Երկաթգծերի ժամանակաւոր երթեւեկութիւ է բացուած Վլադիկաւկազի երկաթուղու Պետրովսկի ճիւղի երկրորդ մասի վրայ Գրոզնոյից մինչև Պետրովսկ։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ եւ վաճառւում է
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԸ
Գրեց
ՅԱԿՈԲ ՃՈՂԱՐԲԷՊԵԱՆ
Դիմել Թիֆլիս հեղինակին,
Գինն է 10 կոպէկ։

ՀՈՑՈՑ ԼԵԶՈՒԻ
ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Գինն է 50 կոպէկ, իսկ ճանապարհածախսը 65 կ.։
կազմեց Մ. ԱՒԵՂԵԱՆ
Վաճառւում է «Նոր-Դար»-ի խմբագրատանը։
20—15.

ԿԱՆԱՆՑ ԱՆԴԱՄԱՀԱՏԱԿԱՆ ԲՈՒԺԱՐԱՆ
Մշտական մահճակալներով։
Կանանց բոլոր հիւանդութիւնները ուշեդաղների ընդունելութիւնը լինում է նախօրօք տուած յայտարարութեամբ։
ԵՐԹԵԻԿ ՀԻՒԱՆԴԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ լինում է երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը ժամը 1—3 կէսօրից յետոյ։ Էլեքտրականութեամբ բժշկութիւնը Apostoli եղանակով լինում է երկուշաբթի և շաբաթ օրերը ժ. 11—12.
Թիֆլիս, Ռեստովսկայա փ. № 21.
Բուժարանի տեսուչ՝
Մ. Գ. ՄԿՐՏՉԵԱՆՑ.
30—8.

ՊԵՏՐՈՎՍԿ ՔԱՂԱՔՈՒՄ
Մեր սեփական գործերի պատճառով մնալու եմ մշտապէս. ընդունում եմ և կատարում եմ ամէն տեսակ յանձնարարութիւնները ստանալու, վաճառելու կամ ճանապարհելու Մոսկուա և Ռուսիայի բոլոր քաղաքները. Նոյնպէս ծովով Անդրկուասեան երկիրն ու Պարսից նաւահանգիստները։ Հասցէս՝ Александру Григорьевичу Абіянцу.
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԲԻԵԱՆՑ։
(508) 4—1

BATEAUX A VAPEUR FRANCAIS A. PAQUET ET Cie
ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.“
Կանոնաւոր և ուղիղ երթեւեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը երկու չաբաթը մի անգամ, յունուարից սկսած և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷԼ։
Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և կ. Պոլիս քաղաքները։
Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գիջումն ունին։
Բաթումից մեկնում է՝
Մօտաւորապէս նոյեմբերի 17-ին (29-ին) և այդպէս երկու չաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։
Որովհետև ձեռք առնուած կարանտինային միջոցների պատճառով կարելի չէ նախօրօք ճշտիւ որոշել չոգենաւերի Բաթումից մեկնելու օրերը, ուստի այդ մասին տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել հետեւեալ գործակալներին։
Բաթումում,մ—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՒՐՆՈՅԻՆ, Նարբերեժնայա։
Թիֆլիսում—պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիօնի փողոց, քարուանսարայ Գէորգ աղայի։
Բաթումում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կոլիւբեակինսկայա հրապարակ։
Նովորոսիսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՕՅԻՆ։
Ձիկադրի ցուցմանդէսը գնալ ցանկացողները կարող են ստանալ մանրամասն տեղեկութիւններ թէ ճանապարհի ծախքի և թէ Հաւրից չոգենաւի մեկնելու ժամանակի մասին
(262) 20—12

ОТКРЫТА ПОДПИСКА на ЮБИЛЕЙНЫЙ 1894 г.
НА ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ ПУТЕШЕСТВІЙ И ПРИКЛЮЧЕНІЙ НА СУШѢ И НА МОРѢ.
XГОДЪ издан.
ВОКРУГЪ СВѢТА
50 №№
12 ежемѣсячн. иллюстрированныхъ книгъ. Каждая книжка будетъ въ этомъ году представлять собою томикъ до 150 стран., имѣющійсодержать или отдѣлный романъ или закончен. сборникъ разсказовъ, стихотвореній и пр.
НАСТУПАЮЩИМЪ 1894 годомъ ЗАКОНЧИТСЯ
ПЕРВОЕ ДЕСЯТИЛѢТІЕ
со дня выхода 1-го № журнала „Вокругъ Свѣта“.—За это время журналъ успѣлъ добиться такого прочнаго успѣха, который безусловно обезпечиваетъ его существованіе на многія и многія десятилѣтія. Настоящій годъ будетъ для журнала „Вокруъ Свѣта“
—ЮБИЛЕЙНЫМЪ,—
а потому редакція и издатель намерены употребить всѣ силы для того, чтобы журналъ въ этомъ году превзошелъ, такъ сказать, себя.—
Въ концѣ года будетъ выданъ подписчикамъ увеличенный
ЮБИЛЕЙНЫЙ НУМЕРЪ.
Журналъ будетъ выходить въ форматѣ двухъ печатныхъ листовъ, со множествомъ отдѣльныхъ рисунковъ и иллюстрацій (всего въ годъ болѣе 2000 столбцовъ текста и до 400 рисунковъ).
Въ журналѣ по прежнему будутъ участвовать: Д. Н. Мамин-Сибирякъ, И. Н. Потапенко, В. И. Немировичъ-Данченко, Н. Н. Каразинъ, С. П. Мечъ, Н. П. Боголюбовъ, К. М. Станюковичъ, Э. Р. Циммерманъ, проф. А. Н. Гренъ и многіе другіе.—Иностранная литература путешествій и приключеній будетъ, какъ всегда, представлена въ журналѣ произведѣніями ея корифеевъ; такъ, будутъ помѣщены: новый романъ Жюля Вѣрна, съ рисунками Беннета; романъ новогреческаго писателя Димитрія Бикеласа, съ рисунк. Ралли; романъ Л. Жаколіо (продолженіе романа «На океанѣ»); новѣйшій романъ Андрэ Лори; очень оригинальный ром. военнаго характера написанный капитаномъ Данри и, кромѣ того, повѣсти, разсказы и очерки Стивенсона, Киплинга, Райдера-Хаггарда, Брауна, Каниве и друг.
НЕ ВЪ ПРИМѢРЪ ПРЕДИДУЩИМЪ ГОДАМЪ РЕДАКЦІЯ
ВЪ 1894 Г. ПРЕДЛАГАЕТЪ ПРИ ДОПЛАТѢ 1 Р. ЗА ПЕРЕСЫЛКУ
БЕЗУСЛОВНО-ОРИГИНАЛЬН., ХУДОЖЕСТВЕННУЮ ПРЕМІЮ:
6 РОСКОШНЫХЪ КАРТИНЪ (ШАННО)
СЪ АКВАРЕЛЕЙ Н. Н. КАРАЗИНА.
Эти картины, размѣр. кажд. 13½×6½ вершк. сдѣланы художникомъ по спеціальному заказу редакціи и изображаютъ собою въ лицахъ и аксессуарахъ природу и людей всего земного шара: Европы, Азіи, Африки, Америки и Австраліи и отдѣльно Россіи.
Подписная цѣна на журналъ „ВОКРУГЪ СВѢТА“ съ доставкой и пересылкой во всѣ города съ ежемѣсячными иллюстрированными приложеніями:
на годъ 4 р. | на ½ г. 2 р. 50 к.
Допускается разсрочка подписной цѣны:
при подпискѣ 2 руб., 1-го апрѣля и 1-го іюля по одному рублю.
Адресъ редакціи: Москва, Валовая ул., д. Сытина.
ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: въ редакціи журнала и во всѣхъ книжн. магазинахъ Москвы, С.-Петербурга и друг. городовъ Россіи.
(Ф.) 3—1.

Дозв Цензурою Тифлисъ, 9-го Ноября 1893 г. Տպարան և Վիմագ. Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ Арм. Приход. Школы.